ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

ԱԼԱՎԵՐԴԻ համայնքի ավագանու հերթական (արտահերթ) նիստի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների և այլ) վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ալավերդի	Ավագանու արտահերթ նիստ	03.02.2026թ.	15:00	Ալավերդու համայնքապետարան, նիստերի դահլիճ (ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8/1)

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 03-ԻՆ ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2026 թվականի փետրվարի 03-ի արտահերթ թիվ 2 նիստի օրակարգը հաստատելու մասին.
2. TOYOTA BZ3X 430 AIR մակնիշի տրանսպորտային միջոցը համայնքի հաշվեկշռում հաշվառելու մասին.
3. CHENGLIWEI CLW5180ZYSD5 մակնիշի տրանսպորտային միջոցը համայնքի հաշվեկշռում հաշվառելու մասին.
4. Քաղաքացի Վահե Վարուժանի Պարանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովայի փողոց 1/15 հասցեում գտնվող 5.3 քմ խանութը որպես նվեր ընդունելու մասին.
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 28 հուլիսի 2025 թվականի՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» թիվ 124-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասի՝ կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2026 թվական, N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 03-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 65-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2026 թվականի փետրվարի 03-ի թիվ 2 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝
   1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2026 թվականի փետրվարի 03-ի արտահերթ թիվ 2 նիստի օրակարգը հաստատելու մասին.
   1.2 TOYOTA BZ3X 430 AIR մակնիշի տրանսպորտային միջոցը համայնքի հաշվեկշռում հաշվառելու մասին.
   1.3 CHENGLIWEI CLW5180ZYSD5 մակնիշի տրանսպորտային միջոցը համայնքի հաշվեկշռում հաշվառելու մասին.
   1.4 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանոի՝ 28 հուլիսի 2025 թվականի՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» թիվ 124-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
   1.5 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասի՝ կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2026 թվական, N -Ա

TOYOTA BZ3X 430 AIR ՄԱԿՆԻՇԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին մասի 21-րդ կետով, 46-րդ հոդվածով՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի համար ձեռք բերված TOYOTA BZ3X 430 AIR մակնիշի , LVGD2D065SG031016 իդենտիֆիկացիոն համարի (VIN), սպիտակ գույնի տրանսպորտային միջոցը՝ 9 620 000 (ինը միլիոն վեց հարյուր քսան հազար) հաշվեկշռային արժեքով, հաշվառել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի հաշվեկշռում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2026 թվական, N -Ա

CHENGLIWEI CLW5180ZYSD5 ՄԱԿՆԻՇԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին մասի 21-րդ կետով, 46-րդ հոդվածով՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի համար ձեռք բերված CHENGLIWEI CLW5180ZYSD5 մակնիշի, LXP2EE035SD000737 իդենտիֆիկացիոն համարի (VIN), սպիտակ-նարնջագույն տրանսպորտային միջոցը (աղբատար մեքենա)՝ 36629998 (երեսունվեց միլիոն վեց հարյուր քսանինը հազար ինը հարյուր իննսունութ) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, հաշվառել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի հաշվեկշռում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2026 թվական, N -Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՀԵ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՊԱՐԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ 1/15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 5.3 ՔՄ ԽԱՆՈՒԹԸ ՈՐՊԵՍ ՆՎԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, սեփականության իրավունքի վկայականը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Որպես նվեր ընդունել ՀՀ Լոռվա մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովայի փողոց 1/15 հասցեում գտնվող, Վահե Վարուժանի Պարանյանի սեփականության իրավունքով պատկանող, 5.3 քմ խանութը (վկայական N 13062025-06-0006):
2. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով Վահե Վարուժանի Պարանյանի հետ կնքել կրպակը նվեր ընդունելու մասին պայմանագիր, կատարել գույքի՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի անվամբ գրանցման աշխատանքներ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻՑ ՀԱՏՎԱԾ

Մ 1:5000

՝Ալավերդի համայնք, Ալավերդի քաղաք Սայաթ-Նովայի փողոց 1/15 խանութ /հողամասի ծածկագիր՝ 06-002-0027-0050



ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2026 թվական, N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 28 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՂՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 124-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 28 հուլիսի 2025 թվականի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՂՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 124-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2026 թվական, N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՂՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ՝ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ, 481-րդ հոդվածներով, 59-րդ հոդվածի 5-րդ կետով, 60-րդ և 74-րդ հոդվածներով, 76-րդ հոդվածի 5-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, ՀՀ կառավարության 14.01.2010թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկվածպետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N 16-Ն որոշմամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 141 կետով և 46.2 կետի ե) ենթակետով,Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով պետական սեփականության իրավունքի N 24032021-06-0043 վկայականը, «Ֆասթ Ֆրեյթ» ՍՊ ընկերության տնօրեն՝ Ա. Ավետիսյանի կողմից ներկայացված գրությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Ալավերդի համայնքի գյուղ Թեղուտ, 2-րդ թաղամաս 55/1 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող, կադաստրային 06-037-0321-0006 ծածկագրով, 6.35708 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների հողամասը 5 (հինգ) տարի ժամկետով, տարեկան 635000 (վեց հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ վարձավճարով, կառուցապատման իրավունքով, առանց մրցույթի «Ֆասթ Ֆրեյթ» ՍՊ ընկերությանը տրամադրելուն:
2. Հողամասը գտնվում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
3. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ պատրաստել հողաշինարարական գործ և ներկայացնել մարզպետին:
4. Դրական եզրակացության դեպքում ապահովել կառուցապատման իրավունքի պայմանագրի կնքման գործընթացը «Ֆասթ Ֆրեյթ» ՍՊԸ-ի հետ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: